

Տիգրան Եփրեմյան

ՎԵՍՏՖԱԼՅԱՆ ԱՇԽԱՐՉԱԿԱՐԳԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Ազգ, պետություն, ինքնիշխանություն, շահ, խաղաղություն,
ուժերի հավասարակշռություն, Վեստֆալյան համակարգ:

Արդի միջազգային հարաբերությունների ձևավորումը սկսվել է հարդյունս 1648 թ. Վեստֆալի միջազգային պայմանագրի¹: Վեստֆալյան պայմանագրերով է, որ առաջին անգամ ակտիվ շրջանառության մեջ դրվեց պետություն հղացքը՝ իբրև միջազգային հարաբերությունների հիմնական միավոր: 1648 թվականից հետո ձևավորված հորիզոնական հարաբերությունները ինքնիշխան պետությունների միջև փոխարինեցին կայսրության և Եկեղեցու հիերարխիայով քողարկված տարասեռ ֆեոդալական միավորների միջև ուղղաձիգ-աստիճանակարգային հարաբերություններին: Պետական ինքնիշխանության համախմբումը և հարկադրանքի միջոցների մեջաշնորհումը պետական իշխանություններին օժտեց բացառիկ վերահսկողությանը արտաքին քաղաքականության միջոցների (բանակ, դիվանագիտություն և այլ) նկատմամբ: Արանով և սահմանագծված տարածքի հաստատումով քաղաքական դաշտը տարանջատվեց ներքին և արտաքին ոլորտների՝ հենված ներքին քաղաքական հիերարխիայի և արտաքին աշխարհաքաղաքական անարխիայի վրա: Վեստֆալյան պայմանագրերից հետո ոչ-տարածքային քաղաքական միավորները (ֆեոդալներ, ազատ քաղաքներ և այլ) դուրս մնացին միջազգային քաղաքականությունից: Քաղաքականության և կրոնի տարանջանումն ու ինքնորոշման գաղափարը հանգեցրին միջազգային հանրության իրավահավասար անդամների խաղաղ գոյակցության սկզբունքին: Կայսերական համընդիանրական հայեցակարգին և քրիստոնեական հանրապետության (res publica christiana) համատեքստում բարոյահոգևոր գերիշխանության պապական ձգտումներին փոխարինեց ուժերի հավասարակշռության սկզբունքը՝ բազմաթիւ, անարխիկ միջավայրում իբրև միջազգային հարաբերությունների բնական կարգավորիչ: Վեստֆալի (1648 թ.) և Ուտրեխտի (1713 թ.) պայմանագրերի միջև ընկած ժամանակահատվածում սկսեցին ձևավորվել ժամանակակից միջազգային հարաբերությունները²:

14-15-րդ դարերում Եվրոպայում մեկնարկում է նոր տեսակի հասարակական-պետական կառույցի՝ ազգային պետության, ձևավորման գործընթացը՝ կապված ինչպես կայսրությունների անկման, այնպես էլ ազգային բուրժուազիայի կայցման հետ: Արտաքին կայսերական խորհրդանշերը պահպանող նախկին

¹ Համաձայն ռեալիստական, անգլիական դպրոցի և կոմսորուկտիվիստական տեսության Վեստֆալյան պայմանագրերը շրջադարձային նշանակություն ունեցան միջազգային հարաբերությունների պատմության մեջ:

² Sie Teschke B., The Myth of 1648: Class, Geopolitics, and the Making of Modern International Relations / Verso, London - New York 2003, p. 3:

կայսրությունների ներսում հասունանում են այնպիսի ազգային պետություններ, ինչպիսիք են Ֆրանսիան, Անգլիան, Պորտուգալիան, Շվեդիան, Նիդեռլանդները, Իսպանիան և այլն¹: Բոլոր այս պետությունները մի քանի հարյուրամյակ կշարունակեն մնալ իրեն գաղութային կայսրություններ, որոնք այլևս դասական կայսրություններ չեն. գաղութները նվաճվում կամ հիմնվում էին ոչ թե վերագային ամբողջություն ստեղծելու համար, այլ բացառապես ազգային պետությունների զարգացման ու հարստացման նպատակով, թեև նրանց վարած քաղաքականությունը հոյց վարպետորեն քողարկվում էր կայսերական գաղափարաբանությամբ: Ահա այստեղ է արտահայտվում կայսերական և կայսերապաշտական (իմպերիալիստական) քաղաքականությունների միջև տարբերությունը: Իրենց հերթին աշխարհագրական մեծ հայտնագործությունները ոչ միայն փոխեցին Եվրոպացիների պատկերացումները աշխարհի մասին, այլև Եվրոպական պատմությունը վերածեցին համաշխարհայինի²:

«Ազգային պետություն» հասկացությունը ձևավորող երկու այս բաղադրիչները՝ «ազգ» և «պետություն», պատմականորեն գործակեռ չեն զարգացել: Պետությունը և ազգը միաձուլվել են ազգային պետության մեջ միայն 18-րդ դարի վերջի (ամերիկյան և ֆրանսիական) հեղափոխություններով³: Եվրոպայում «ազգ»⁴ հասկացությունը (ժամանակակից իմաստով) զարգացել է ժառանգական բացարձակ միապետության պայմաններում: Այսպիսի պետությունը ներկայանում էր իրեն միապետի սեփականություն: Ունենալով իր յուրահատկությունները Եվրոպական տարբեր պետություններում՝ ժառանգական բացարձակ միապետությունը քաղաքական կառուց էր, որն անհրաժեշտ էր ֆեոդալական հասարակական և արտադրական հարաբերությունների կառավարման համար: 16-րդ դարում՝ Ռեֆորմացիայի բուրն շրջանում, բացարձակ միապետությունը դեռ հանդես էր գալիս խաղաղության և սոցիալական կապերի ամրության երաշխավոր: Յատկանշական է 1555 թ. Ալեքսանդր Հելլենիստական պայմանագրի սկզբունքը, ըստ որի կրոնը պետք է ենթարկվեր ինքնիշխանի կառուցմերի տարածքային վերահսկողությանը («cuius regio, eius religio»)⁵:

Կապիտալի նախնական կուտակման գործնթացները աստիճանաբար նոր պայմաններ ստեղծեցին իշխանության բոլոր կառուցմերի համար: Միապետի

¹ Տե՛ս

« », – 125-126: http://www.zlev.ru/125/125_36.htm (03.09.2011).

² Տե՛ս

³ Տե՛ս **Хаберմաս Ю.**, – , 1997, . 64:

⁴ «Յամաձայն դասական հօռմեական իմաստի "natio" (լատ. ազգ) հասկացությունը "gens" (ցեղ) հասկացության նման հակադրվում էր "civitas" (պետություն) հասկացությանը: «Ազգերը» հանրույթներ էին՝ կապված ամենից առաջ ծագմանք, աշխարհագրորեն, մշակույթով, ընդհանուր լեզվով, բարերուց ու ավանդույթներով, բայց դեռ ոչ քաղաքականապես: Միջին դարերում և Նոր ժամանակների սկզբունք այս իմաստը դեռ պահպանվում էր ամենուր, որտեղ "natio"-ն նույնացվում էր "lingua"-ի (լեզվի) հետ» (**Хаберմաս Ю.**, սկզ. սու., с. 204):

⁵ Տե՛ս „A., / „, 2004, . 97-98:

իշխանության ֆեոդալական հիմքերը քայլայվում էին: Սակայն մինչև բուրժուական երեք մեծ հեղափոխությունների՝ անգլիական¹, ամերիկյան ու ֆրանսիական², ժամանակաշրջանը չկար որևէ քաղաքական այլընտրանք այս մոդելին: Եվ բացարձակ միապետական ժառանգական մոդելը պահպանվում էր շնորհիվ միայն քաղաքական ուժերի փոխազդման: Յետզի ետք ազգային ինքնագիտակցության բարձրացման ազդեցությամբ ձևավորեց այն մշակութային համատեքստը, որում հպատակները կարող էին դառնալ քաղաքականապես ակտիվ քաղաքացիներ: Ժառանգական բացարձակ միապետությունը ազգային պետության փոխակերպվելուն զուգընթաց հպատակի (subjectus) ֆեոդալական կարգը իր տեղը զիջեց քաղաքացիական (cives) կարգին, որը կայունացվեց և ամրացվեց ազգային ինքնությամբ՝ մշակույթով, էթնիկ ինքնուրույնությամբ, հավաքական հիշողությամբ և տարածքային ու լեզվական ընդհանրությամբ³:

Արևանտյան և Ջյուսիսային Եվրոպայի ազգերը ձևավորվեցին արդեն 1648 թ. Վեստֆալի պայմանագրով ավարտուն տեսք ստացած տարածքային պետությունների ներսում: «Ուշացածները»՝ առաջին հերթին գերմանական և իտալական ազգերը, անցան զարգացման այլ ճանապարհ, ինչը բնորոշ էր Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի ազգային պետությունների ձևավորմանը, որտեղ ազգային պետությունների կազմավորմանը նախորդում էր ազգային ինքնագիտակցության և ազգային գաղափարաբանության քարոզությունը⁴:

Գաղափարական առումով ազգ-պետությունների կայացումը հիմնավորվեց ժամանակի խոչը իրավագետների ու քաղաքական ինաստասերների աշխատություններում: Ժան Բոդենի (1529-1596 թթ.) «Վեց գիրք պետության մասին» (Les six livres de la République, 1576) աշխատությունում զարգացվեց պետական ինքնիշխանություն հասկացությունը. «ինքնիշխանությունը պետության բացարձակ և մշտական իշխանությունն է իր հպատակների և քաղաքացիների վրա»: Նիկոլ Սաքիավելին (1469-1527 թթ.), ով քաղաքական ռեալիզմի տեսության հիմնադիրներից է, իր «Տիրակալ» (De Principatibus / II Princeps, 1532) տրակտատում հիմնավորեց ազգային պետական շահի առաջնայնությունը: Մեծ նշանակություն ունեն նաև Թոմաս Յորբրի (1588-1679 թթ.) և Բենեդիկտ Սպինոզայի (1632-1677 թթ.) աշխատությունները: Յուգո Գրոթիուսի (1583-1645 թթ.) «Ծովերի ազատությունը» (Mare Liberum, 1608) ու «Պատերազմի և խաղաղության իրավունքի մասին» (De Jure Belli ac Pacis, 1625) աշխատություններով համակարգվեց և զարգացվեց միջազգային իրավունքը: Յ. Գրոթիուսը զարգացնում է բնական իրավունքի հղացքը:

¹ 1688 թ. անգլիական Փառահեղ հեղափոխությամբ և հաջորդած մի շարք փոխազդումային ակտերի միջոցով Պառլամենտը դարձավ ինքնիշխանության կրող (Benno Teschke, op. cit., p. 253):

² Ֆրանսիայում մինչև 1789 թ. ֆրանսիական մեծ հեղափոխությունը ինքնիշխանության կրողը թագավորն էր՝ Լուի 14-րդը. «Պետությունը ես եմ» («L'Etat, c'est moi»): Յեղափոխությամբ ինքնիշխանության ակունք հռչակվեց ազգը:

³ Տես Ա., 98-99. Ինչպես Բ. Անդրսոնն է նշում. «ազգը գործում է իրու կողեւկտիվ երևակայություն»:

⁴ Տես Ա., 197:

Բացահայտելով հասարակական համակեցության անխուսափելիությունը՝ նա անհրաժեշտ է համարում նաև ազգերի խաղաղ համագոյակցության սկզբունքը, որի իրացման համար բոլոր պետությունները պարտավոր են հետևել որոշակի օրենքների. կատարել ստանձնած պարտավորությունները և պահպանել իրավահավասարությունը¹:

Ուզմաքաղաքական առումով ազգ-պետությունների ձևավորման գործընթացում բեկումնային նշանակություն ունեցան 1618 թ. Կենտրոնական Եվրոպայում բռնկված Երեսնամյա պատերազմը (1618-1648 թթ.) և այն եզրափակող Վեստֆալյան պայմանագրերը: 1517 թվականին սկսված ռեֆորմացիայի հետևանքով Յոռմեական սրբազն կայսրությունը բաժանվեց կաթոլիկական հարավի և բողոքական հյուսիսի: Իսկ հակառեֆորմացիայի հետևանքով սկսված Երեսնամյա պատերազմը, որը քաղաքականապես ամրացրեց կրոնական ռեֆորմների արդյունքները, փաստորեն կործանեց Յոռմեական սրբազն կայսրությունը, և սկսվեց ազգային պետությունների ձևավորման գործընթացը: Երեսնամյա պատերազմը առաջին համաեվրոպական պատերազմն էր, որը սկսվեց իբրև կրոնական պատերազմ Գերմանիայի կաթոլիկ ու բողոքական խմբավորումների միջև: Այն քաղաքական բնույթ ստացավ, երբ Յոռմեական սրբազն կայսրության տիրակալները՝ ավստրիական Յաքսը Ֆերդինանդ 2-րդ-ի վորձը՝ փրկելու կայսրությունը, ծախողվեց: Այստեղ գլխավոր դեր ունեցավ Ֆրանսիան՝ ի դեմս Ռիշելիեի դիվանագիտության. կարդինալը պաշտպանեց բողոքական երկրներին՝ առաջնորդվելով Ֆրանսիայի գերակա պետական շահերով (*raison d'état*)³: Կարդինալ Ռիշելիեն ձգտում էր ֆրանսիական անվտանգությունը կառուցել Եվրոպական կոլեկտիվ անվտանգության համակարգի համատեքստում⁴:

Վեստֆալյան կոնֆերանսի պաշտոնական բացումը եղավ 1643 թ. հուլիսի 11-ին: 1645 թ. օգոստոսի 29-ին Ֆերդինանդ 3-րդ կայսրը վերջապես համաձայնեց գերմանական իշխանությունների լիիրավ մասնակցությանը Վեստֆալյան կոնֆերանսին⁵: Նախնական պայմանագիրը կայսեր և Ֆրանսիայի միջև ստորագրվեց Մյունիստերում 1646 թ. սեպտեմբերի 13-ին, վերջնականը՝ 1648 թ. հոկտեմբերի 24-ին⁶: Կայսեր և Շվեդիայի միջև նախնական պայմանագիրը կնքվեց 1647 թ. փետրվարի 18-ին

¹ Տես „ , „ , 2003, . 293-294:

² Տես Bonney R., The Thirty Years' War 1618-1648, Osprey Publishing, Oxford 2002, p. 7:

³ Տես Kissinger H., Diplomacy, Simon & Schuster / New York, London, Toronto, Sydney, Tokyo, Singapore - 1994, p. 59:

⁴ Տես Rowen H., The Peace of Westphalia Revisited, The Journal of Modern History, Vol. 33, No. 1 (Mar., 1961), The University of Chicago Press, pp. 53-56: Stable URL: <http://www.jstor.org/stable/1876476> (07.10.2010).

⁵ Տես Bonney R., op. cit., p. 86:

⁶ Տես **Treaty of Westphalia: Peace Treaty between the Holy Roman Emperor and the King of France and their respective Allies**; Yale Law School, Lillian Goldman Law Library; The Avalon Project: Documents in Law, History and Diplomacy. http://avalon.law.yale.edu/17th_century/westphal.asp (26.02.2012).

Օսմաբրյուկում, Վերջնականը՝ 1648 թ. մայիսի 15-ին, ինչը համապատասխան էր Ֆրանսիայի հետ նախնական պայմանագրին: 1648 թ. հունվարին Նիդերլանդների և Իսպանիայի միջև անջատ հաշտության պայմանագրով ճանաչվեց Նիդերլանդների ինքնիշխանությունը: Խաղաղությունը ավելի հարատև դարձնելու համար 1648 թ. հոկտեմբերի 24-ի ֆրանս-կայսերական հաշտության պայմանագրի մեջ ընդգրկվեցին նաև շվեդա-կայսերական և կոնգրեսին մասնակից կայսրության միավորների կնքած պայմանագրի շատ դրույթներ: Ստացվեց փոխկապակցված փաստաթղթերի ամբողջություն՝ հաստատելով Վեստֆալյան խաղաղությունը:

Ֆրանսիայի համար դեռ մնում էր խաղանական Հարսբուրգների սպառնալիքը: 1658 թ. կարդինալ Մազարինին գերմանական որոշ պետությունների փորձում էր համոզել միանալու Ֆրանսիայի կողմից ուղղորդվող Շոենույան լիգային՝ կոլեկտիվ անվտնագության համակարգ ստեղծելու նպատակով: Սակայն գերմանական պետությունները մերժեցին այս գաղափարը. Վեստֆալի պայմանագրիրը Վերջնական էր և կոլեկտիվ անվտանգությունն այլևս անհրաժեշտ չէր¹: Վեստֆալի պայմանագրով գերմանական բազմաթիվ պետությունները իրենց տարածքներում ստացան գերիշխանություն, բայց ոչ ինքնիշխանություն: Նրանց թույլատրված չէր գործելու ի վեհական կամ կայսրության, բայց գործնականում կարող էին և գործում էին՝ մտնելով արտաքին դաշինքների մեջ: Իսկ կայսրը, իր հերթին, պահպանում էր հակաօրինական գործողության նեպքում իշխանությունների կառավարիչներին գահընկեց անելու իրավունքը: Երաշխավորվում էր նաև Շվեյցարական կանտոնների անձնանիստելիությունը: Այսպիսով, կայսրությունը ժառանգական բացարձակ միապետության վերածելու Հարսբուրգների փորձերը ձախողվեցին²:

1648 թ. Մյունստերի և Օսմաբրյուկի պայմանագրերը, որ միասին հայտնի են որպես Վեստֆալի պայմանագրի, ծևավորեցին միջազգային հարաբերությունների և իրավունքի մի համակարգ՝ իիմնված երեք իիմնական սկզբունքների վրա՝ ա. պետական ինքնիշխանության սկզբունք, բ. ինքնիշխան պետությունների իրավահավասարություն, գ. այլ ինքնիշխան պետությունների ներքին գործերին չմիջամտելու պարտավորություն³:

Դայսմ՝ Վեստֆալյան համակարգ մտած ինքնիշխան ազգային պետությունները ունեին լիակատար իշխանություն իրենց տարածքում և հավասար էին միմյանց միջև դրանից դուրս: Վեստֆալյան կանոնները թույլատրում էին, որ համակարգ նոր մտած ցանկացած պետություն ներսում կազմակերպված լինի այլորեն, ինչը նրա ինքնիշխան իրավունքն է⁴: Եթեագայում այս սկզբունքները զարգացվեցին և վերածվեցին միջազգային իրավունքի: Այդու՝ Վեստֆալյան պայմանագրերը երկակի բնույթ

¹Տես Bonney R., op. cit., p. 88, 90: Ֆրանս-իսպանական կոնֆլիկտը շարունակվեց մինչև 1659 թ. Պիրենեյների հաշտության պայմանագրիը:

²Տես Teschke B., op. cit., p. 244:

³Տես Rosenau J., Czempiel E., Governance without government: order and change in world politics; Cambridge University Press; Cambridge 2003, p. 59:

⁴Տես Лебедева М. М.,

ունեին՝ լինելով միաժամանակ և միջազգային, և գերմանական սահմանադրական իրավունքի դրույթներ: Գերմանական սահմանադրության բարձրացումը միջազգային հանրային իրավունքի մակարդակի նշանակում էր ներգերմանական քաղաքականության միջազգայնացում. գերմանական իշխանությունների սահմանադրական ազատությունը կայսրից երաշխավորվում էր ֆրանսիայի և Շվեյչարյայի կողմից¹:

Աշխարհակարգի միջնադարյան նոդելը կամ մինչվեստֆալյան աշխարհակարգը Եվրոպայում քրիստոնյա ժողովուրդների հանրապետություն էր (*res publica gentium cristianorum*)՝ Յոռմի պապի գլխավորությամբ: Այս աշխարհակարգի համակողմանի «կարգավորիչներն» էին Յոռմի պապը և Յոռմեական սրբազնա կայսրության կայսրը: Միջնադարյան Եվրոպայում միայն Յոռմի պապն էր ինքնիշխան համարվում: Մյուս տիրակալները (թագավորներ, դուքսեր, կոմսեր) հանդես էին գալիս պապական վասալների դերում: Սա բրգածն կառուց էր, որի գագաթին պապական պետությունն էր, այնուհետև հերթականությամբ մյուս տիրակալները: Բուլգի ներսում հարաբերությունները ուղղաձիգ-աստիճանակարգային էին: Աստիճանաբար աշխարհիկ տիրակալներն իրենք եւ սկսեցին ձգտել ինքնիշխանության իրենց տիրույթներուն և այդպիսով հակամարտության մեջ մտան Յոռմի հետ: Իսկ արդեն 1648 թվականից հետո «ինքնիշխանություն» եզրը այլևս բնութագրական էր ոչ թե կարոլիկ եկեղեցու առաջնորդությամբ քրիստոնեական համայնքի միասնության, այլ անկախ քաղաքական համայնքների բազմազանության համար: Թեպետ և պայմանագրերը ձևակերպվեցին համարդիանրական քրիստոնեական լեզվի կանոններով²:

Վեստֆալյան աշխարհակարգը ի տարբերություն միջնադարյանի արտացոլում էր ամենակի նոր իրողություն: Այստեղ այլևս չկար միասնական բարձրագույն համընդհանրական իշխանություն: Ի տարբերություն նախորդի միջազգային հարաբերությունների Վեստֆալյան համակարգի գլխավոր «կարգավորիչը» դարձավ ուժերի հավասարակշռության սկզբունքը³: Սկսած 15-րդ դարից հավասարակշռության տեսությունը մշակել էին նշանավոր մտածողներ Գվիչարդինին, Մաքիավելին, Զենտիլյեն: Այս տեսությունը պրակտիկայի վերածվեց սկզբում հենց Ապենինյան թերակղղում: Հիտալական պետությունները դաշինքներ կամ միություններ էին կազմում միմյանց դեմ, որոնք փոփոխվում էին կախված կողմերի ուժային հարաբերակցության փոփոխությունից: Այսպես, հիտալական տիրակալներին հաջողվում էր լուծել մինյանց միջև ծագող վեճերը: Այսպիսով, «հիտալական մոդելը» վեր է ածվում միջազգային հարաբերությունների մոդելի Եվրոպայում, ապա նաև աշխարհում: Այս մոդելի գլխավոր չափորոշիչներն էին աշխարհիկ ինքնիշխանությունը, ինքնիշխան հավասարությունը և աշխարհիկ ինքնիշխան տիրակալների միջև ուժերի հավասարակշռությունը: Զենց այս չափորոշիչներն էլ ընկան Յուգո Գրոթիուսի միջազգային իրավունքի հիմքում:

¹Տես **Teschke B.**, օր. cit., p. 244: Վեստֆալի պայմանագրի կետերի խախտվելու դեպքում ֆրանսիային և Շվեյչարյան իրավունք էր վերապահված միջամտելու կայսրության ներքին գործերին:

²Տես **Dekker I. F., Werner W. G.**, Governance and International Legal Theory / Martinus Nijhoff Publishers, Leiden/Boston 2004, p. 135-136:

³Տես **Зонова Т. В.**,

Միջազգային հարաբերությունների նեղ-մարքսիստական քննադատական տեսության համաձայն բացարձակ միապետության դարաշրջանի Եվրոպայում 1648 թ. հետո էլ առաջնորդվում էին ոչ թե ազգային, այլ դինաստիական շահերով: Միջազգային հարաբերությունների համակարգի կայացումը, գործունեությունը և կերպափոխումը հիմնովին կատարվում էր սոցիալական-ունեցվածքային հարաբերություններով: Դիվանագիտության բարձրագույն մեխանիզմը դինաստիական անուսնություններն էին: Միջդինաստիական անուսնությունները ոչ միայն բնութագրում էին «միջազգային» հարաբերությունները, այլև հաստատում էին իշխողների ծավալապաշտական շահավետ ռազմավարությունը: Ինչպես Բեննո Թեսչըն է նշում. «Սա աշխարհաքաղաքական կարգ էր, որում «պետությունները» կարող էին ամուսնանալ «պետությունների» հետ»¹: Այս անձնական միություններն ապահովում էին տարածքային տարրեր պետությունների ներգրավվածությունը մեկ քաղաքական տարածության մեջ: Այդ առումով Եվրոպական քաղաքականությունը Դարսբուրգ-Ների, Բուրբոնների, Ստյուարտների, Յոհենցոլերների, Ռոմանովների, Վիտելսբախների և այլ միապետական տների հարաբերություններ էին: Բացի այդ կարևոր դեր ունեին նաև անդրազգային միջազնվականական միությունները: 1648 թ. փորձ էր իրավականացնելու Եվրոպական քաղաքականությունը՝ Երաշխավորված Ֆրանսիայի և Շվեյցարի կողմից, որոնք ստացան իրավարարի և միջամտողի վերադաս իրավունքներ: Փաստորեն Վեստֆալյան խաղաղությունը չվերացրեց միջազգային իշխանության համընդհանրական-աստիճանակարգային բնույթը, քանզի նրա իշխանական գաղափարը խաղաղությունն էր, ոչ թե ինքնորոշումը: Իսկ ինքնիշխան հավասարության սկզբունքը խիստ հարաբերական էր, որովհետև միշտ էլ միջազգային որոշ դերակատարներ ավելի ինքնիշխան էին, քան մյուսները:

Վեստֆալը ոչ միայն սկզբունքների հավաքականություն է կամ միջազգային պայմանագրերի ամբողջություն, այլ նաև պետությունների ու ռեժիմների ամբողջություն է: Այն նախ և առաջ համակարգ էր, որն իր բնականոն կենսագործունեության ապահովման համար խնդիր ուներ համարժեք պատասխաններ տալ ներքին և արտաքին մարտահրավերներին, իսկ անհրաժեշտության դեպքում զարգանաւ, կերպափոխվել և հարմարվել փոփոխվող աշխարհի պայմաններին: Վեստֆալյան համակարգը կազմեցին Վեստֆալյան պայմանագրերը ստորագրած պետությունները: Սակայն սկզբնապես դա անգամ համաեվրոպական համակարգ կարելի էր համարել միայն պայմանականորեն: Դատկանշական է, որ Վեստֆալյան համակարգում ընդգրկված պետությունները դիտարկվում էին «վեստֆալյան չափումներով», իսկ համակարգից դուրս մնացածները՝ բոլորովին այլ կերպ. այստեղ ևս դրսկորվում է Վեստֆալի համակարգային բնույթը, նրա ամբողջականությունը և «նույնականությունը»:

Վեստֆալի պայմանագրիր վերացրեց 1555 թ. Առօքսբուրգի հաշտության պայմանագրի դրույթը², առաջ քաշելով կրոնական ինքնորոշման գաղափարը: Վեստֆալյան խաղաղությունը ուրվագծեց, այսպես կոչված, «կրոնական պատերազմների»

¹Տես Teschke B., op. cit., p. 225:

²Այն է՝ հպատակները դավանում են իրենց տիրակալի հավատքը (cuius regio, eius religio):

ավարտը: Դա շարունակվեց ոչ-գաղափարաբանական՝ ժառանգության իրավունքի համար պատերազմների միջակայքով, մինչև որ Ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակաշրջանում պատերազմը կրկին ստացավ «սկզբունքային» բնույթ¹:

Ժառանգության իրավունքի համար պատերազմներից հատկապես նշանավոր էր խսպանական պատերազմը (1701-1714 թթ.) և Ուտրեխտի 1713 թ. պայմանագիրը, որտեղ ուժերի հավասարակշռության սկզբունքը դարձավ միջազգային հարաբերությունների ճանաչված նորմը²: Ուտրեխտի կոնգրեսում ուժերի հավասարակշռության սկզբունքի հիմնական գաղափարը ինքնորոշումն էր, ոչ թե խաղաղությունը: Երբ փլուզվեց միասնության և համընդհանրության հղացքը, Եվրոպայում փոխհարաբերությունների կարգավորման նոր սկզբունքների կարիք առաջացավ: Եվ միջազգային քաղաքականությունը իրականացնողները դա համարեցին պետական շահ և ուժերի հավասարակշռությունը: Մեկը կախված էր մյուսից: Որևէ մի պետության կողմից առաջինին չափից ավելի ջանասիրաբար հետևելը առաջացնում էր երկրորդի անհրաժեշտությունը³: Մեծ Բրիտանիան⁴ 1713 թ. Ուտրեխտի պայմանագրով ստանալով Զիբլարթարը և Մինորկա կղզին՝ հրաժարվեց մայրցամաքային Եվրոպայում տարածքային պահանջներից և հավակնություն դրսկորեց կարգավորելու Եվրոպական հարաբերությունները ակտիվ հավասարակշռման իր նոր քաղաքականությամբ⁵:

Ամփոփենք: 1648 թվականի Վեստֆալյան պայմանագրերը ծառայեցին իբրև նոր աշխարհակարգի հիմնադրման կառուցվածքային շրջանակ, որի ներսում ծևավորվեցին արդի միջազգային հարաբերությունները: Եվրոպական քաղաքականության այսպիսի կառուցվածքային փոխակերպության հիմքը սոցիալ-պատմական նոր իրողության՝ ազգային պետությունների առաջացման մեկնարկն էր: Ըստ այդմ, Եվրոպայում միջազնուական փոխհարաբերությունների նոր մոդելը հիմնվեց պետական շահ, ուժերի հավասարակշռություն, պետական ինքնիշխանություն և ինքնիշխան հավասարություն հղացների վրա: Այդ կերպ Վեստֆալյում պետական ինքնիշխանության և իրավահավասարության սկզբունքներով հաստատված «դեմոկրատական» միջազգային համակարգը փոխարինեց միջնադարյան «տոտալիտար» աշխարհակարգին: Վեստֆալյան համակարգի կերտողները ինքնիշխանության սկզբունքի միջոցով ոչ միայն դրեցին նոր միջազգային քաղաքական համակարգի հիմքերը, այլև հնարավորություն ստեղծեցին վերջինիս հետագա զարգացման և կերպափոխման համար:

Տիգրան Եփրեմյան, Վեստֆալյան աշխարհակարգի ձևավորման պատմությունից – Սույն հողվածը միջնադարյան համընդհանրական աշխարհակարգից արդի միջազգային հարաբերությունների համակարգին Եվրոպական քաղաքականության անցման համեմատական վերլուծության փորձ

¹ Տե՛ս Rowen H., op. cit., p. 54:

² Տե՛ս Teschke B., op. cit., p. 233:

³ Տե՛ս Kissinger H., op. cit., p. 66:

⁴ 1707 թ. Անգլիայի և Շոտլանդիայի միջև միության պայմանագրով (Treaty of Union) ձևավորվում է Մեծ Բրիտանիայի քաղաքավորությունը:

⁵ Տե՛ս Teschke B., op. cit., p. 259:

Է: Յոդվածում քննարկվում են ինքնիշխան պետության և ազգ-պետության փենոմենները, ինչպես նաև Վեստֆալյան համակարգի հիմնական սկզբունքները: Վեստֆալյան խաղաղությանը (1648 թ.) կայսերական համընդհանրական հայեցակարգին և քրիստոնեական հանրապետության (res publica christiana) համատերստում բարոյահոգնոր գերիշխանության պայական ձգտումներին փոխարինեց ուժերի հավասարակշռության սկզբունքը՝ բազմաթե՛ս, անարխիկ միջավայրում իբրև միջազգային հարաբերությունների բնական կարգավորիչ:

Վեստֆալյան պայմանագրերը ծառայեցին իբրև նոր աշխարհակարգի հիմնադրման կառուցվածքային շրջանակ, որի ներսում ձևավորվեցին արդի միջազգային հարաբերությունները: Վեստֆալյան համակարգի կերտողները ինքնիշխանության սկզբունքի միջոցով ոչ միայն դրեցին նոր միջազգային քաղաքական համակարգի հիմքերը, այլև հնարավորություն ստեղծեցին վերջինիս հետագա զարգացման և կերպավորիչման համար:

Տիգրան Եպրեմյան, Из истории образования Вестфальского мирового порядка –

(1648).

«

» (Res Publica Christiana)

Tigran Yepremyan, From history of formation of Westphalian World Order – The article is an attempt of comparative analysis of the main points of the transition of European politics from the medieval universal world order to the modern international relations system based on the sovereign nation state and the Peace of Westphalia (1648). It begins with a brief survey of the nation-state phenomenon. Simultaneously with formation of the nation-state, universal conceptions of empire and papal aspirations to moral primacy in the context of the «res publica Christiana» gave way to the balance of power as the natural regulator of international relations in a multipolar, anarchical environment.

The Peace of Westphalia has also served as establishing the structural frame for world order that has endured, with modifications from time to time, until the present. Thus, I proceed comparatively and chronologically by elaborating and contrasting different theories and historical logics of international relations, exemplified by the medieval, early modern, and modern geopolitical systems. This comparative perspective allows us to identify fundamental differences in their respective patterns of co-operation and conflict.

*Տիգրան Եփրեմյան - պատմ. գիտ. թեկնածու, ԵՊՀ պատմության ֆակուլտետի
համաշխարհային պատմության ամբիոնի ասպիրանտ*

